

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի առաջին կիսամյակում Սյունիքի մարզպետարան

մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2019 թվականի առաջին կիսամյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 6382 թղթակցություն, առաքվել՝ 3913 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է. ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 312, ՀՀ Ազգային ժողովից՝ 4, պետական վերահսկողության ծառայությունից՝ 3, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 1, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 295, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 894, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 1592, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1982, գաղտնի թղթակցություն՝ 35, ՀՀ քաղաքացիներից՝ 1263 դիմում: ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 219 դիմում, որից՝ ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 2, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 142 ՀՀ Ազգային ժողովից՝ 9, պետական վերահսկողական ծառայությունից՝ 8, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից՝ 5, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 3, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 36, հանրապետական գործադիր մարմիններից՝ 14 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2019թ. առաջին կիսամյակում կատարվել է 242 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: